

«Սլավոնեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ

2024թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Երևան - 2025

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.....	6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	9
2024Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2024թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի առ 31 դեկտեմբերի 2024թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան :

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Ընկերությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության մասնակիցներն են պատասխանատու Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական խեղաթյուրումներ: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը:
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական

հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արմինե Ասոյան



Աուդիտի մենեջեր, որակավորված աուդիտոր,

ՀԳԿ՝ 2 23 0805

Արթուր Հարությունյան



Տնօրեն, Որակավորված աուդիտոր,

ՀԳԿ՝ 2 20 0017

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ

26 հունիսի 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.

Հազար դրամ

Ծան. 31.12.2024թ. 31.12.2023թ.

Ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվներ

Հիմնական միջոցներ	6	2,936,825	2,887,296
Հետաձգված հարկային ակտիվներ	16	79,422	85,120
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7	24,802	108,888
Տրամադրված փոխառություններ		-	11,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		3,041,049	3,092,304

Պաշարներ

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8	174,753	176,680
Դրամական միջոցներ	9	101,995	113,497
	10	11,821	125,725
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		288,569	415,902
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		3,329,618	3,508,206

Սեփական կապիտալ և պարտավորություններ

Կանոնադրական կապիտալ	11	1,152,420	1,152,420
Կուտակված շահույթ		(139,445)	(358,828)
Ընդամենը սեփական կապիտալ		1,012,975	793,592

Բանկային վարկեր

Լիզինգի գծով պարտավորություններ	12	109,648	188,216
	14	191,412	261,928
Ակտիվներին վերաբերող շնորհներ		692	227
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		301,752	450,371

Բանկային վարկեր

Կարճաժամկետ փոխառություններ	12	74,797	114,363
Լիզինգի գծով պարտավորություններ	13	1,130,745	1,374,637
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	14	185,804	135,641
Շահութահարկի գծով պարտավորություն	15	151,336	128,349
Եկամուտներին վերաբերող շնորհներ		13,073	43,739
Ընթացիկ պահուստներ՝ վաստակված արձակուրդայինների գծով		1,694	921
		457,442	466,593
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,014,891	2,264,243

ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3,329,618 3,508,206


Տնօրեն

Արմինե Հովակիմյան




Գլխավոր հաշվապահ

Վահագն Քեշիշյան

26 հունիսի 2025թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 6' 25-ից

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

Հազար դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Հասույթ	17	3,707,211	3,633,193
Վաճառքի ինքնարժեք	18	(2,967,877)	(2,997,058)
Համախառն շահույթ		739,334	636,135
Այլ եկամուտներ	19	35,823	11,767
Իրացման ծախսեր		(27,563)	(32,509)
Վարչական ծախսեր	20	(384,724)	(249,936)
Այլ ծախսեր		(20,259)	(5,437)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ)		7,023	(11,130)
Ֆինանսական ծախսեր	21	(73,440)	(82,963)
Շահույթ նախքան շահութահարկը		276,194	265,927
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	22	(56,811)	(46,113)
Տարվա շահույթ		219,383	219,815
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		219,383	219,815


Տնօրեն

Արմինե Հովակիմյան



26 հունիսի 2025թ.


Գլխավոր հաշվապահ

Վահագն Քեչիկյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ (կուտակված վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2023թ.	1,152,420	(578,643)	573,777
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	219,815	219,815
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,152,420	(358,828)	793,592

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ (կուտակված վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.	1,152,420	(358,828)	793,592
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	219,383	219,383
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	1,152,420	(139,445)	1,012,975

 Տնօրեն Արմինե Հովակիմյան	 26 հունիսի 2025թ.	 Գլխավոր հաշվապահ Վահագն Քեշիշյան
--	--	--

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	3,766,638	3,615,687
Ապրանքների վաճառքից մուտքեր	37,432	34,322
Այլ մուտքեր	392	73
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(921,816)	(906,543)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,111,592)	(2,048,875)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(115,934)	(29,219)
Վճարված շահութահարկ	(81,934)	(15,560)
Այլ վճարումներ	(20,305)	(19,494)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	552,881	630,391
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(113,607)	(107,742)
Փոխառությունների տրամադրումից	(2,000)	(11,000)
Տրամադրած փոխառությունների մարումից	13,000	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(102,607)	(118,742)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի ստացումից	157,000	-
Վարկերի մարումից	(268,428)	(172,338)
Ստացված փոխառություններից	57,214	214,072
Ստացված փոխառությունների մարումից	(307,203)	(291,978)
Վարկերի գծով տոկոսների մարումից	(18,306)	(22,942)
Լիզինգի գծով պարտավորության մարումից	(137,672)	(102,944)
Լիզինգի գծով տոկոսների վճարումից	(46,808)	(43,059)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(564,203)	(419,189)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(113,929)	92,460
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	125,725	33,586
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	25	(321)
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	11,821	125,725


Տնօրեն

Արմինե Հովակիմյան



26 հունիսի, 2025թ.


Գլխավոր հաշվապահ
Վահագն Քեչիշյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Էջ 9' 25-ից

ստանձնելով համապարտ պարտավորություն:

24.2. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.3. Հարկային անորոշություններ


Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:


Տնօրեն

Արմինե Հովակիմյան




Գլխավոր հաշվապահ

Վահագն Քեչիշյան

2024Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ալավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 01.03.2012թ.-ին:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

ա) Ընկերության

Անվանումը՝	«ԱԼԱՎՄԵԴ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
Գրանցման համարը՝	264.110.73525
Գրանցման վկայականը՝	03Ա 223525
Գրանցման ամսաթիվը՝	01.03.2012թ.
Իրավաբանական հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պող., 3 նրբ 4/8
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պող., 3 նրբ 4/2
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	00111893

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Բժշկական ծառայությունների մատուցումը, այդ թվում՝
 - Ախտորոշիչ ծառայություններ
 - Լաբորատոր հետազոտություններ
 - Բուժում և վերականգնում
- Դեղերի վաճառք
- Սննդամթերքի արտադրություն և վաճառք:

Աշխատակիցների քանակը 31.12.2024թ. դրությամբ կազմել է 387 հոգի (31.12. 2023թ.՝ 360 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,152,420,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր հիսուներկու միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է երկու հատ բաժնեմասերի, համապատասխանաբար 1,152,370,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր հիսուներկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) և 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության մասնակիցներ են՝

- Հովակիմյան Ստանիսլավ Գուրգենի - 99.996%
- Հովակիմյան Արմինե Ստանիսլավի - 0.004%

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը, ով ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

գ) Հայաստանի գործարար միջավայր

Հայաստանը շարունակում է անցումային փուլ ապրել քաղաքական և տնտեսական առումներով: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի այնպիսի կայացած բիզնես և կարգավորող ենթակառուցվածքներ, որոնք բնորոշ են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների ակտիվության ծավալը, ինչի հետևանքով այդ շուկաներում ձևավորված արժեքները կարող են չարտացոլել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Տնտեսության հետագա զարգացման հիմնական խոչընդոտներն են՝ տնտեսական և

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ինստիտուցիոնալ ցածր զարգացվածության մակարդակը, կենտրոնացված տնտեսական կառուցվածքը, տարածաշրջանային անկայունությունը և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Այն երկրների տնտեսական իրավիճակի վատթարացումը, որոնք համագործակցում են Հայաստանի Հանրապետության հետ, հանգեցրել է արտերկրից դրամական փոխանցումների պակասին, որոնցից հայկական տնտեսությունը զգալիորեն կախված է: Հանքարդյունաբերական ապրանքների միջազգային գների հետագա անկումը, ուղիղ կապիտալ ներդրումների ներգրավման հետ կապված անորոշությունները, ինչպես նաև գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության և Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման: Սակայն, հաշվի առնելով անորոշությունների հետ կապված բազմաթիվ փոփոխականները և ենթադրությունները, Ընկերության ղեկավարությունը չի կարող հուսալիորեն գնահատել այն գումարները, որոնք կարող են ազդել Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Ընկերության ղեկավարությունը համարում է, որ ներկայիս պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմը և դրա ազդեցությունը

Ռուսաստանի և Ուկրաինայի միջև 2022 թվականի փետրվարից սկսված պատերազմը էական ազդեցություն է ունեցել տարածաշրջանային տնտեսական միջավայրի վրա, ներառյալ՝ Հայաստանի: Որպես այդ երկրների հետ սերտ տնտեսական կապեր ունեցող երկիր՝ Հայաստանը բախվել է ինչպես ռիսկերի, այնպես էլ որոշակի հնարավորությունների:

Մասնավորապես, նկատվել են առևտրային հոսքերի, ֆինանսական փոխանցումների և միգրացիոն շարժերի զգալի փոփոխություններ: Ռուսաստանից փոխանցումների աճը և բիզնեսների տեղափոխումը դրական ազդեցություն են ունեցել կարճաժամկետ տնտեսական աճի վրա, մինչդեռ մատակարարման շղթաների խաթարումները և աշխարհաքաղաքական անորոշությունը նոր տնտեսական և ֆինանսական ռիսկեր են առաջացրել:

Ընկերության ղեկավարությունը շարունակում է ուշադիր հետևել իրավիճակին: Չնայած երկարաժամկետ հետևանքների ամբողջական բնույթը մնում է անորոշ, հաշվետու ժամանակահատվածի դրությամբ Կազմակերպության ֆինանսական դիրքի և գործունեության վրա դրա ազդեցությունը էական չի եղել: Կազմակերպությունը պատրաստ է վերանայել իր գնահատականները՝ ելնելով ապագա զարգացումներից, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական արդյունքների, դիրքի կամ բացահայտումների վրա:

Իրանի և Իսրայելի միջև պատերազմը և դրա ազդեցությունը

Հաշվետու ժամանակահատվածից հետո Իրանի և Իսրայելի միջև հարաբերությունները սրվեցին՝ վերածվելով ռազմական հակամարտության, որը զգալի անկայունություն է առաջացրել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ գլոբալ տնտեսության վրա: Այս զարգացումները կարող են ազդեցություն ունենալ էներգետիկայի գների, առևտրային երթուղիների և շուկայի ընդհանուր վիճակի վրա:

Հաշվետվության հաստատման օրվա դրությամբ ընկերության գործունեության վրա ուղիղ ազդեցություն չի գրանցվել: Այնուամենայնիվ, ղեկավարության կողմից դիտարկվում են մի շարք **անուղղակի ռիսկեր**, այդ թվում՝

- Հումքի և էներգիայի գների տատանումներ
- Մատակարարման շղթայի հնարավոր խափանումներ
- Արտարժույթի փոխարժեքների փոփոխություններ և հնարավոր գնաճ

Տվյալ պահին ֆինանսական ազդեցությունը հնարավոր չէ հստակ գնահատել, սակայն ընկերությունը մշտապես վերանայում է իր ռիսկերը՝ կապված գործընկերների, պայմանագրերի կամ մատակարարների հետ:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. Հայտարարություն համապարասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին («ՓՄԿ ՖՀՄՍ») համապատասխան: ՓՄԿ

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՖՀՄՄ-ն ընդունվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից 2015թ., իսկ դրա պաշտոնական հայերեն տարբերակը հրապարակվել է ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 25-ի N 559-Ն որոշմամբ:

2.2. Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Սպորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2025թ. հունիսի 26-ին Ընկերության տնօրեն Արմինե Հովակիմյանի և գլխավոր հաշվապահ Վահագն Քեշիշյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա, երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա: Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝ ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը, դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները: Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն: Այնքանով, որքանով մատուցվելիք կամ մատուցված ծառայության դիմաց հատուցումը ստացված է նախքան հասույթի ճանաչումը (ստացված կանխավճարների չափով), հասույթը չափվում է հատուցման՝ ստացման ամսաթվի դրությամբ իրական արժեքով: Ապրանքների (դեղորայքի, բուժապարագաների) վաճառքից հասույթը ճանաչվում է ապրանքը գնորդին հանձնելու պահին:

3.2. Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

- ա) գույքի սկզբնական ճանաչումից,
- բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը: Նման ճշգրտումները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է կա՛մ ձեռնարկատիրական գործունեության միավորումից, կա՛մ գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

- ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,
- բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, երբ ա) ունի իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ կորուստը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման-վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- | | |
|-------------------------------------|------------|
| • Շենքեր և կառուցվածքներ | 20-40 տարի |
| • Տնտեսական և այլ գույք | 1-10 տարի |
| • Մեքենաներ և սարքավորումներ | 1-10 տարի |
| • Համակարգչային տեխնիկա և սերվերներ | 1-10 տարի |

3.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները և բանկերում բացված հաշվարկային հաշիվները:

3.5. Արտարժույթային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

Դրամով	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2024թ.	2023թ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
1 ԱՄՆ Դոլար	424.88	392.47	413.89	404.79
1 ԵՎՐՈ	392.657	424.58	396.56	447.90

3.6. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.7. Ֆինանսական գործիքներ

(i) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սովորաբար ճանաչվում են մատուցված ծառայությունների դիմաց հաստատված սակագներով դուրս գրված հաշիվ ապրանքագրերի անվանական գումարներով: Յուրաքանչյուր տարեվերջին Ընկերությունը ստուգում է դեբիտորական պարտքերի հավաքման հավանականությունը և անհրաժեշտության դեպքում ստեղծում է հնարավոր կորուստների պահուստ՝ շահույթում կամ վնասում ճանաչելով արժեզրկումից կորուստը:

(ii) Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Ընկերության կրեդիտորական պարտքերը մարման սովորական ժամկետով, անտոկոս ֆինանսական պարտավորություններ են, որոնք ճանաչվում են անվանական գումարներով:

(iii) Տրամադրած և ստացված փոխառություններ

Տրամադրած և ստացված փոխառությունները սկզբնապես հաշվառվում են գործարքի գումարով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքի մեթոդով՝ արդյունքային տոկոսադրույքով: Կարճաժամկետ անտոկոս կամ շուկայականից էականորեն ցածր տոկոսադրույքով փոխառությունները հաշվառվում են գործարքի գումարով և անվանական տոկոսադրույքով: Երկարաժամկետ փոխառությունները հաշվառվում են վճարվելիք գումարով և անվանական տոկոսների վճարումների ու մայր գումարի վերադարձի ներկա արժեքով: Այդ ներկա արժեքի և գործարքի գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ գործարքի կողմը սեփականատեր է, որի դեպքում այդ տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես սեփականատերերից կապիտալի հատկացում կամ սեփականատերերին շահույթի բաշխում: Մինչև մեկ տարի ժամկետով գործարքները սեփականատերերի հետ հաշվառվում են անվանական գումարներով:

3.8. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր տարեվերջին Ընկերությունը ստուգում է, թե արդյոք առկա է որևէ վկայություն, որ հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները կարող են արժեզրկված լինել: Եթե կա նման վկայություն, ապա իրականացվում է համապատասխան ակտիվ(ներ)ի արժեզրկվածության հաշվարկ: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը՝ ակտիվի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.9. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Հեղձման դրույքն այն դրույքն է, առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Հեղձման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.10. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- Աշխատավարձը,
- կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
- պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքների պարագայում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայություն

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. Ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

5. Նոր կամ փոփոխված ՓՄԿ ՖՀՄՍ

5.1. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտնած ՓՄԿ ՖՀՄՍ

2025 թվականի փետրվարին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակեց «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը» (ՓՄԿ ՖՀՄՍ)՝ երրորդ խմբագրությամբ, որը պարտադիր կիրառելի է 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառությունը թույլատրելի է: ՀՀ-ում ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրությունը պարտադիր կիրառելի կդառնա պաշտոնապես հայերեն թարգմանվելուց և պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո միայն:

Երկրորդ խմբագրությամբ ՓՄԿ ՖՀՄՍ-ն հրապարակվել էր 2015 թվականին: Այն ժամանակվանից ի վեր բազմաթիվ փոփոխություններ էին տեղի ունեցել ամբողջական ՖՀՄՍ-ներում: ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրության մեջ ներառվել են ամբողջական ՖՀՄՍ-ներում տեղի ունեցած փոփոխությունները՝ այնքանով, որքանով տեղին են համարվել փոքր ու միջին կազմակերպությունների համար:

Ակնկալվում է, որ երբ Ընկերությունը կիրառի ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրությունը, այն էական ազդեցություն կունենա իր ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն այս պահին չկա հստակ գնահատական այդպիսի ազդեցությունների: Ստորև նշում ենք մի քանի կարևոր փոփոխություններ:

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- Ներմուծվել են չափման, ներկայացման և բացահայտման նոր հայեցակարգեր և ապաճանաչման վերաբերյալ ուղեցույց,
- Նորացվել են ակտիվների և պարտավորությունների սահմանումները և ճանաչման չափանիշները,
- Հստակեցվել են հաշվենկատության, «խնամակալության», չափման անորոշության և ձևի նկատմամբ բովանդակության գերակայության հասկացությունները,
- Փոփոխվել են ֆինանսական գործիքների հաշվառման մոտեցումները, մասնավորապես՝
 - ներդրվել է պահանջ դասակարգելու ֆինանսական գործիքը՝ հիմք ընդունելով պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերը (առանց դիտարկելու բիզնես մոդելը),
 - ավելացվել է պահանջ՝ բացահայտելու ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների ժամկետայնությունը,
 - ավելացվել է ֆինանսական երաշխավորության պայմանագրի սահմանումը և փոփոխվել տրամադրված ներխմբային ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով պահանջները,
 - հանվել է «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի ճանաչման և չափման պահանջները կիրառելու ընտրանքը.
- Ավելացվել է նոր բաժին՝ Իրական արժեքի չափման վերաբերյալ, որը համահունչ է «Իրական արժեքի չափում» ՀՀՄՍ 13-ին,
- Վերանայվել է «Բիզնեսների միավորում և գույվիլ» բաժինը,
- Վերանայվել է հասույթի վերաբերյալ բաժինը՝ «Գնորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ին համահունչ, որդեգրելով հասույթի ճանաչման հնգաքայլ մոդելը՝ որոշակի պարզեցումներով:

«Ալավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր և կառուցվածքներ	Տնտեսական և այլ գույք	Համակարգչային տեխնիկա և սերվերներ	Մեքենաներ և սարքավորումներ	Հողամասեր	Այլ հիմնական միջոցներ	Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք								
Մնացորդ առ 01.01.2023թ.	938,902	234,083	17,552	3,112,486	265,770	402,645	485,493	5,456,931
Ավելացում	-	15,242	3,569	90,291	-	24,334	3,515	136,951
Կապիտալացում	-	23	-	30	-	44	-	97
Շահագործման հանձնում	489,008	-	-	-	-	-	(489,008)	-
Դուրս գրում	-	-	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2023թ.	1,427,910	249,348	21,121	3,202,807	265,770	427,023	-	5,593,979
Ավելացում	-	55,133	7,936	203,939	-	11,032	-	278,040
Կապիտալացում	77,711	-	134	4,154	-	42	-	82,041
Նվազում	-	(3,371)	(24)	(51,965)	-	(2,297)	-	(57,657)
Մնացորդ առ 31.12.2024թ.	1,505,621	301,110	29,167	3,358,935	265,770	435,800	-	5,896,403
Մաշվածություն								
Մնացորդ առ 01.01.2023թ.	74,120	113,298	15,757	1,972,908	-	154,367	-	2,330,450
Տարվա մաշվածություն	14,732	21,895	2,756	284,980	-	51,870	-	376,233
Դուրս գրում	-	-	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2023թ.	88,852	135,193	18,513	2,257,888	-	206,237	-	2,706,683
Տարվա մաշվածություն	36,852	29,180	6,391	182,574	-	55,155	-	310,152
Դուրս գրում	-	(3,310)	(24)	(51,625)	-	(2,298)	-	(57,257)
Մնացորդ առ 31.12.2024թ.	125,704	161,063	24,880	2,388,837	-	259,094	-	2,959,578
Հաշվեկշռային արժեք								
Առ 01.01.2023թ.	864,782	120,785	1,795	1,139,578	265,770	248,278	485,493	3,126,481
Առ 31.12.2023թ.	1,339,058	114,155	2,608	944,919	265,770	220,786	-	2,887,296
Առ 31.12.2024թ.	1,379,917	140,047	4,287	970,098	265,770	176,706	-	2,936,825

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականությամբ պատկանող որոշ մեքենա-սարքավորումներ գրավադրված են՝ որպես բանկային վարկերի ապահովություն: Ընկերության կողմից կառուցված նոր մասնաշենքը նախորդ տարի հանձնվել է փաստացի շահագործման, սակայն հանձնման թույլտվության և դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման իրավական գործընթացներն դեռ ավարտված չեն: Ընկերությունը 2024թ նոյեմբերին կնքել է լիզինգով սարքավորում ձեռք բերելու պայմանագիր՝ 83,420 հազար ՀՀ դրամ գումարով, որի ներքո առաքումն ակնկալվում է 2025թ. Հուլիսին (տես ծան. 14):

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

7. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ	Առ 31.12.2024թ.	Առ 31.12.2023թ.
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	-	107,953
Ոչ նյութական ակտիվներ	24,802	935
Ընդամենը	24,802	108,888

8. Պաշարներ

Հազար դրամ	Առ 31.12.2024թ.	Առ 31.12. 2023թ.
Դեղորայք	71,811	63,348
Բժշկական նյութեր և պարագաներ	83,086	79,122
Ապրանքներ	10,082	17,006
Տնտեսական պարագաներ	8,806	15,417
Սննդամթերք	968	1,787
Ընդամենը	174,753	176,680

Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել է 588,138 հազար դրամ (2023թ.՝ 542,784 հազար դրամ): Պաշարների սեփականության իրավունքի սահմանափակումներ չկան:

9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	Առ 31.12.2024թ.	Առ 31.12.2023թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	75,617	101,456
Տրված ընթացիկ կանխավճարներ	20,456	8,884
Այլ դեբիտորական պարտքեր	5,922	3,157
Ընդամենը	101,995	113,497

10. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

10.1. Դրամական միջոցների մնացորդներ

Հազար դրամ	Առ 31.12.2024թ.	Առ 31.12.2023թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	7,255	109,771
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	13	289
Դրամարկդ՝ ՀՀ դրամով	4,553	15,665
	11,821	125,725

10.2. Ոչ դրամային գործարքներ

Կատարվել են ներդրումային կամ ֆինանսավորման գործունեությանը վերաբերող հետևյալ ոչ դրամային գործարքները.

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Լիզինգով հիմնական միջոցների ձեռքբերում	127,367	73,646
Ընդամենը	127,367	73,646

11. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է և բաղկացած է երկու բաժնեմասից՝ 1,152,370,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր հիսուններկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) և 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարներով:

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

12. Բանկային վարկեր

Երկարաժամկետ մաս.

Հազար դրամ

Բանկային վարկ՝ դրվարով, մինչև 15.04.2027թ. մարման ժամկետով, տարեկան 8% տոկոսադրույքով

Ընդամենը

31.12.2024թ.	31.12.2023թ.
109,647	188,216
109,647	188,216

Բանկային վարկերը ապահովված են մասնակիցների և այլ կապակցված կողմերի երաշխավորություններով:

Ընկերությունը 2024թ. կնքել է 50 մլն ՀՀ դրամ սահմանաչափով վարկային գծի երկու պայմանագիր մինչ 2025թ մարման ժամկետով և 11,25 % տոկոսադրույքով:

Կարճաժամկետ մաս.

Հազար դրամ

Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 29.05.2024թ. մարման ժամկետով, տարեկան 2,5% տոկոսադրույքով

Բանկային վարկ՝ դրվարով, մինչև 15.04.2027թ. մարման ժամկետով, տարեկան 8% տոկոսադրույքով

Ընդամենը

31.12.2024թ.	31.12.2023թ.
-	43,919
74,796	70,444
74,796	114,363

13. Կարճաժամկետ փոխառություններ

Հազար դրամ

Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ դրամով, անտոկոս

Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ դրամով, 8.5-9.5%-ով

Տոկոսներ կարճաժամկետ փոխառությունների գծով

Ընդամենը

31.12.2024թ.	31.12.2023թ.
933,607	1,337,763
197,138	31,028
-	5,846
1,130,745	1,374,637

14. Լիզինգի գծով պարտավորություններ

Ընկերությունն ունի լիզինգով ստացված սարքավորումներ մի քանի պայմանագրերով, որոնց ժամկետը մինչև 2027 թվականն է:

Ստորև ներկայացված են լիզինգի գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների.

Հազար դրամ	Լիզինգի գծով պարտավորություններ		Լիզինգի գծով պարտավորությունների ներկա արժեք	
	31.12.2024թ.	31.12.2023թ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
Մինչև մեկ տարի	207,048	174,399	185,803	135,641
1-ից 5 տարի	197,717	289,377	191,411	261,928
5 տարուց ավելի	-	-	-	-
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր՝	(27,551)	(66,208)	-	-

Ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝

Հազար դրամ	31.12.2024թ.	31.12.2023թ.
- Լիզինգի գծով պարտավորությունների ընթացիկ մաս	185,804	135,641
- Լիզինգի գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	191,412	261,928
	377,216	397,569

Ընկերությունը 2024թ նոյեմբերին կնքել է ևս մեկ լիզինգի պայմանագիր՝ 83,420 հազար ՀՀ դրամ մայր գումարով, որի գծով սարքավորման առաքումն ակնկալվում է 2025 թվականի հուլիսին: Պայմանագրի ժամկետը մինչ 2028թ-ն է և վերջինիս գծով առաջացող տոկոսագումարի 10%-ը ենթական է սուբսիդավորման:

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

15. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերն առավելապես վերաբերում են ՀՀ տարածքում ձեռք բերված նյութերի, հիմնական միջոցների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարներին վճարման ենթակա գումարներին:

Հազար դրամ	31.12.2024թ.	31.12.2023թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	69,330	61,580
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների ձեռքբերման գծով	2,527	2,158
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ	45,162	36,730
Աշխատանքի վարձատրության գծով կրեդիտորական պարտքեր և պահուստներ	34,235	27,654
Ստացված ընթացիկ կանխավճարներ	82	227
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	151,336	128,349

16. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

16.1. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածների հետ.

Հազար դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	31.12.24թ.	31.12.23թ.	31.12.24թ.	31.12.23թ.	31.12.24թ.	31.12.23թ.
Հիմնական միջոցներ	-	1,133	(2,918)	-	(2,918)	1,133
Արձակուրդայինի պահուստ	82,340	83,987	-	-	82,340	83,987
Զուտ հարկային ակտիվ (պարտավորություն)	82,340	85,120	(2,918)	-	79,422	85,120

16.2. Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

Հազար դրամ	01.01.23թ.	ճանաչված 2023թ.	31.12.23թ.	ճանաչված 2024թ.	31.12.24թ.
Հիմնական միջոցներ	6,218	(5,086)	1,132	(4,050)	(2,918)
Արձակուրդայինի պահուստ	75,454	8,534	83,988	(1,648)	82,340
Հարկային վնաս	-	-	-	-	-
Ընդամենը	81,672	3,448	85,120	(5,698)	79,422

17. Հասույթ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Բժշկական ծառայությունների մատուցումից հասույթ	3,593,385	3,530,048
Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	49,859	38,560
Ապրանքների վաճառքից հասույթ	63,967	64,585
	3,707,211	3,633,193

18. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Աշխատավարձ	2,103,513	1,979,732
Մաշվածություն և ամորտիզացիա	285,945	340,898
Նյութածախս	411,919	490,377
Կոմունալ	35,500	34,648
ՀՄ սպասարկման ծախսեր	8,100	33,416

«Ալավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Մաքրության և բժշկական թափոնների ոչնչացման ծախսեր	16,038	28,299
Լաբորատոր աշխատանքներ և հետազոտություններ	32,279	27,996
Ապրանքների վաճառքի ինքնարժեք	73,859	55,407
Այլ	724	6,285
Ընդամենը	2,967,877	2,997,058

19. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ	5,114	3,802
Պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված լիզինգի տոկոսի սուբսիդավորում	14,179	3,430
Տարածքի վարձակալությունից եկամուտ	2,510	2,400
Տոկոսային եկամուտ	-	357
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ	4,000	-
Այլ	10,020	1,778
Ընդամենը	35,823	11,767

20. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Աշխատավարձ	152,830	118,402
Գրասենյակային և կոմունալ	36,248	31,784
Պահպանության ծառայություն	31,131	28,297
Մաշվածություն և ամորտիզացիա	22,503	30,970
Բանկային ծախսեր և ապահովագրություն	18,887	17,534
Նյութածախս	12,582	1,170
Գործուղման և խորհրդատվական ծախսեր	35,872	5,511
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	5,399	3,975
ՀՄ սպասարկման ծախսեր	43,061	4,451
Այլ	26,211	7,842
Ընդամենը	384,724	249,936

21. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Վարկերի և ակրեդիտիվների գծով	17,429	31,509
Լիզինգի գծով	49,471	46,041
Փոխառությունների գծով	6,540	5,413
Ընդամենը	73,440	82,963

22. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	46,567	49,559
Նախորդ տարվա ընթացիկ հարկի ճշտում	4,546	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ (տես ծանոթ. 16)	5,698	(3,448)
Ընդամենը	56,811	46,111

Ընկերության կիրառելի շահութահարկի դրույքը 18% է (2023թ.՝ 18%):

2024 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապարասխանեցում.

Հազար դրամ	2024թ.	%	2023թ.	%
Շահույթ նախքան հարկումը	276,194		265,927	
Շահութահարկ՝ ընթացիկ դրույքաչափով	49,715	18.0	47,867	18.0
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը	(1,264)	(0.5)	2,003	0.7
Նախորդ տարվա սխալի ուղղման ազդեցությունը	(4,546)	(1.6)	(3,992)	(1.5)
Այլ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	12,906	4.7	234	0.1
	56,811	20.5	46,111	17.3

23. Կապակցված կողմերի հետ գործարքներ

23.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Ընկերության մասնակիցները թվով 2 ֆիզիկական անձինք են (Ծանոթ. 1):

23.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	15,669	15,615
	15,669	15,615

23.3. Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Գործարքի գումար	Գործարքի գումար	Չմարված մնացորդ	Չմարված մնացորդ
	2024թ.	2023թ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ընկերության մասնակիցների հետ՝				
Ստացված փոխառություններ	13,860	-	933,607	1,226,785
Ստացված փոխառությունների մարում	307,038	160,000	-	-
Տրամադրված փոխառություններ	2,000	-	-	-
Տրամադրված փոխառությունների մարում	2,000	-	-	-
Այլ կապակցված կողմերի հետ՝				
Տրամադրված փոխառություններ	-	11,000	-	11,000
Տրամադրված փոխառությունների մարում	11,000	-	-	-
Տրամադրված փոխառությունների տոկոս	740	356	-	356
Ստացված փոխառություններ	43,354	214,072	197,138	141,473
Ստացված փոխառությունների մարում	165	131,978	-	-
Ստացված փոխառությունների տոկոս	12,479	5,412	-	5,840
Ապրանքների ձեռքբերում	27,203	26,748	2,649	2,194
Տրված կանխավճար	24,184	-	-	-
Ստացված կանխավճար	1,097	-	-	-
Ստացված երաշխավորություններ	-	-	-	43,919
Կապակցված կողմերի հետ համատեղ տրամադրված երաշխավորություններ	-	-	496,247	619,370

24. Պայմանական դեպքեր

24.1. Երաշխավորություններ

Ընկերությունը կապակցված կազմակերպությունների ստանձնած վարկերի համար բանկերի հանդեպ հանդիսանում է երաշխավոր: Մինչև նույն ժամանակ, այդ կապակցված կազմակերպությունները երաշխավոր են հանդիսանում Ընկերության վարկային պարտավորությունների համար՝ բոլորը բոլորի հանդեպ

ստանձնելով համապարտ պարտավորություն:


24.2. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.3. Հարկային անորոշություններ


Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունված մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:


Տնօրեն

Արմինե Հովակիմյան




Գլխավոր հաշվապահ

Վահագն Քեչիշյան